

առանց խտրութեան միջոցներու: Երրորդն էր Աւետիս. «սա պարկեշտագոյն էր եւ բան վարդապետութեան ունէր ի վերայ նոցա», այսինքն Դաւթի եւ Մելքիսեդեկի, կը գրէ Դարանաղցի, «բայց հրամանն անիմաստ եւ զազանաբարոյ Մելքիսեդէին էր, ո՛չ օրինօք եւ կանոնովք առաքելադիր, այլ կաշառօք եւ բռնութեամբ այլազգեացն յափշտակելով ի Դաւթէն» (52): Նոյն իմաստով կը գրէ նաեւ Դաւրիթեցի (204—205). «յետ ամաց ինչ... միանգամայն յինքն կորզեալ գրաւեաց զիշխանութիւն կաթողիկոսութեան եւ ինքն վարէր. եւ զԴաւիթ (եւ զԱւետիս) հարստահարեալ եւ արտաքսեալ ի բացեայ արար յիշխանութենէն»:

Մելքիսեդեկի բացասական կողմերը շատ են չեշտուած ժամանակի պատմագիրներէն. բայց պէտք է խոստովանիլ թէ ժամանակն ալ շատ է չոյած անոր այս չարամասնութիւնները: Մելքիսեդեկ կառավարեց Հայոց Եկեղեցին իբր 40 տարի ամենադժուարին պայմաններու մէջ. երկիրը անդադար պատերազմներու, հարստահարութիւններու տակ տնտեսապէս եւ բարոյապէս քայքայուած, բարոյալքուած էր. յաջորդեց Այրարատեան դաշտի բռնի տեղահանութիւնը (1604) դէպի Պարսկաստան. պատերազմներով բազմատանջ երկիրը յանկարծ սմայացաւ: Եւ սակայն Մելքիսեդեկ ունեցաւ քաջութիւնը հակառակ Շահին խիստ հրամաններուն՝ դուրս գալ տարազրեալներու չուէն «կէս ճանապարհին»,